Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀՏՊՄ—33

# ՀԵՏԵՎԱԿԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

## ՄԱՍ 2-ՐԴ

ՀՐԱՁԳԱՅԻՆ ԳՆԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(ՀԱԿԱՌԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԻ ՄԱՐՏԻԿԻ, ՀՐԱՄԱՏԱՐԻ ՈՒ ՆՐԱ ՋՈԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ)

ՊԵՏՀՐԱՏ ՌԱԶՄԱՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1934

356
Հ-25

1 MAR 2010

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

356
Հ-25

ՀՏՊՄ—33

1006
28222

# ՀԵՏԵՎԱԿԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

## ՄԱՍ 2-ՐԴ

Հրանգային զենքի մասնագիտական ստորաբաժանումների տակտիկական խնդիրները (Հակոդային պաշտպանության դասակի մարտիկի, հրամատարի ու նրա ջոկի պատրաստությունը

ՅԵՐԵՎԱՆ 1933

20.11.2013
42.390

Պատ. խմբագիր Հ. Ալեքյան, Տեխ. խմբ. Գ. Զենյան, Թարգ. Գրաբիս, Սրբագրեց Գար. Հակոբյան, Հրատ. № 2697, Պատվ. № 1900 Գլավլիտ 8261.(ր) Տիրաժ 1000.
Պետհրատի Տպարան

Հանձնված է արտադրութ. 10/VIII/33 թ.
Ստորագրված է տպելու 20/XII/33 թ.

# Ա. ՀԱԿՈԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԻ ՄԱՐՏԻԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հիմնական նպատակն է՝ պատրաստել կարմիր բանակայինից հակոդային պաշտպանության դասակի մարտիկ՝ ընդունակ աշխատելու ստորաբաժանման կազմի մեջ և ինքնուրույն:

2. Առաջադրած խնդրի կատարումն ապահովվում է այն խնդիրների ուշադիր, պլանաչափ ու համառ մշակումով, վոր դրվում են նրանց վրա ժամանակակից մարտում: Այդ խնդիրները հետևյալն են.

1-ին խնդիր—յերթն ու նրա պահպանությունը.

2-րդ խնդիր—մարտիկի գործողությունները գնդի պաշտպանողական տեղամասի ընդհանուր սխեմում, ոբյեկտի պաշտպանության կազմակերպման ու վարման ժամանակ.

3-րդ խնդիր—ոբյեկտի պաշտպանության կազմակերպելն ու վարելը հարձակողական մարտում.

3. Ի տարբերումն հրաձգային ստորաբաժանումների մարտիկներից, հակողային պաշտպանության դասակի մարտիկն անցնում է խնդիրների կրճատված քանակ, ուստի այդ խնդիրները պետք է մշակված լինեն անթերի, իսկ ավելացած ժամանակը պետք է ոգտագործել կրակային պաշտպանության համար:

4. Ուսուցումն անց են կացնում ջոկերի հրամատարները դասակի հրամատարի անմիջական ղեկավարությամբ: Վերջինս մարտիկների մեջ ունակություններ մշակելուց առաջ պարապմունքներ է անցկացնում կրտսեր պետկազմի հետ այս կամ այն նախապատրաստական վարժությունից, կամ հենց պարապմունքներում ցույց է տալիս որինակելի կատարումը, վորից հետո սկսվում է մարտիկների մարզանքը:

## ՅԵՐԹՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախ քան խնդրի մշակումը և խնդրի մշակման հետ զուգընթացաբար մարտիկը ծանոթանում է ԿՄԾ 7–21–րդ հոդվածների հետ և «Կարմիր բանակայինի ռազմաքիմիական պատրաստության կազմակերպումն ու մեթոդիկայի» համապատասխան հրահանգների հետ:



## ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակն է ստուգել, թե ինչ չափով է մարտիկը կարողանում.

ա) փաթաթել վոտքերը փաթաթաններով.

բ) հարդարել հանդերձանքը.

գ) պահպանել յերթի պահպանության պահանջները.

դ) պաշտպանվել ավիաքիմհարձակումից.

ե) տեղ ընտրել դիտողության համար.

զ) վարել ոդի դիտողությունը.

է) ընտրել ու քողարկել դիրք գնդացրի համար.

2. Ստուգել, թե ինչ չափով մարտիկը գիտե ԿՄԾ 8, 13, 14, 21 հոդվածները:

Գնահատականը. «Գերազանց»— անսխալ ու վստահորեն կատարել քննական վարժության բոլոր պահանջները.

«Լավ»—վստահորեն կատարել քննական վարժության պահանջները, ստանալով հրամատարից վոչ ավելի, քան մեկ ուղղում:

«Բավարար»—վոչ ավելի, քան 2 ուղղում:

Անցկացման կարգը. Ստուգումը կատարվում է 4 կիլոմետրանոց յերթում զորասյունի (պայմանորեն) կազմում: Շարժումը հակազազ հագած ստուգվում է վերադարձի ճանապարհին:

Խնդրի չկատարման հիմնական պատճառները կարող են լինել.

*ա) անփույթ պատրաստությունը յերթի համար.*

*բ) անբավարար մարզվածությունը մարտադաշտը դիտելու մեջ.*

*գ) արագ դիրք ընտրել ու քողարկել չկարողանալը.*

*դ) անբավարար վարժվածությունը հակադազով շարժման մեջ:*

## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր.—1–ա(ա), 1–բ(բ), 1–գ(վ), 1–դ(գ), 1–զ(ե), 1–խ(մ), 1–ծ(ն) (*մարտիկի համար*) և 1–զ (ե) (*ջոկի համար*) (*տես* ՀՏՊՄ–33, *մասն* 1–*ին*):

*Մասնագիտական.*

1–ամ (աս). Մշակել ունակություններ դիտողության տեղ ընտրելու համար (*կանգառման ժամանակ*) 360 աստիճան տեսածիրով (*հորիզոնի առավելագույն ընդարձակումով*).

Վարժության նպատակն է՝ սովորեցնել *զորքերի յուրաքանչյուր կանգառման ժամանակ արագ տեղ գրավել ոդի դիտողության համար 360 աստիճան տեսածիրով՝ հորիզոնի սահմանների առավելագույն ընդարձակումով:*

*Այդ ձեռք է բերվում զորամասի դասավորության մեջ ոդի դիտողության համար գանազան տեղերի դիտողական ցուցադրանքի միջոցով և ապա հետագա մարզանքով:*



*Հարցը զգալի քանակով առաջադրություններին պայմաններում յուրացնելուց հետո, մարզանքն անց է կացվում դաշտ, վորտեղ պարագան միանգամայն այլ է. այդ պատճառով, պարապմունքներն սկսելուց առաջ, ղեկավարը պարտավոր է մի քանի որինակներով ցույց տալ, թե ինչպես կարելի յե դաշտում, մինչև իսկ առանց տեղական առարկաների, բոլոր պահանջներին միանգամայն համապատասխանող դիտակետ ընտրել: Ցուցադրանքից հետո սկսում են մարզանքը, սկզբում՝ ճշտության վերաբերյալ, չճգտելով արագության, ապա՝ անցնում են արագության ու ճշտության պարապմունքներին, վորպեսզի յերթում դիտող նշանակված յուրաքանչյուր մարտիկ, յուրաքանչյուր պարագայում, ուշադիր սպասելու հրամատարի ցուցումներին, ընտրի ու գրավի անհրաժեշտ տեղ, դիկուցելով այդ մասին իր հրամատարին:*

1–բմ (բս). Մշակել ունակություններ՝ յերկինքը դիտելու, սավառնակները ճանաչելու և ոդային վտանգի ազդանշաններ փոխանցելու համար:

*Վարժության նպատակն է՝ մշակել մարտիկի մեջ ընդունակություն ու ճարտարություն՝ հորիզոնի վրա հայտնվող ամենամանր կետերով վորոշել սավառնակների մոտեցումը թե՛ հասարակ աչքով և թե՛ ոպտիկական գոր-*

ծիքների ոգնությամբ: Նախքան վարժության մշակումը կատարվում է սավառնակների արտաքին տեսքի ուսումնասիրությունը՝ սավառնակների տարբեր հեռավորությամբ նկարներով և ապա դաշտում՝ ավիացիայի թռիչքների ժամանակ:

Մարզանքն անհրաժեշտ է սկսել պլան-պանորամի վրա, ըստ վորում նշանները պետք է պատրաստել բազմազան մեծությամբ, վորպեսզի մարտիկը վարժվի նկատել հորիզոնի վրա ամենամանր շարժվող կետերը:

Այդ պարապմունքները պետք է կրկնել վորքան կարելի յե հաճախ: Դրա հետ միաժամանակ, յեթե կայազորում կա ավիամաս, անհրաժեշտ է դաշտ դուրս գալ աերոդրոմից 5—10 կիլոմետրի վրա և մարտիկներին դիտել տալ իսկական սավառնակների հայտնվելը, ճանաչել տալ նրանց սիստեմները և փոխանցել ոդային վտանգի ազդաշանները: Կրկնվում է հակագազ հագած և մաշկի պաշտպանության միջոցների գործադրությամբ:

1-դմ (վս) Մշակել ունակություններ՝ գնդացրի դիրքն արագ ընտրելու և ֆոդարկելու համար, վորտեղից կարելի լինի հարվածել ոդային թշնամուն, առանց միաժամանակ հարվածելու իրենց զորքերին:

Վարժության յուրացումն սկսվում է ցուցադրանքից և ավարտվում արկղի վրա դիրք ընտրելու մարզանքից: Ցուցադրական պարապմունքներն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, վոր բոլոր շարժվող զորամասները պարզ նշվեն և մինչև նրանց յեղած հեռավորությունները ճիշտ վորոշվեն: Այդ հնարավորություն կտա մարտիկներին առարկայորեն պարզաբանել, թե ինչպես կարելի յե խուսափել սավառնակների վրա կրակելիս իրենց զորքերի հարվածումից: Ցուցադրանքից ու յուրացումից հետո անհրաժեշտ է անցնել մարզանքի, լուծելով զանազան խնդիրներ, գտնվելով զորամասյունի նկատմամբ տարբեր դրության մեջ: Իրականում հակոդային պաշտպանության դասակի հրամատարը պարտավոր է շարունակ ճիշտ գիտենալ իրենց ու հարևան զորամասյունների տեղերը: Հետագայում պարապմունքները տեղափոխվում են այնպիսի տեղանքի վրա, վորտեղ, ի լրումն այս ամենի, մանրամասնորեն մշակվում է քողարկման տարրը ամենաբազմազան տեղանքի պայմաններում:

ԽՆԴԻՐ ՌԻՐԿԲՈՐԴ

## ՄԱՐՏԻԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՈՒՄ՝ ՈՐՅԵԿՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՑԵՎ ՎԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Նախ քան խնդիրը մշակելը, Խնդրի մշակման հետ դուգընթացաբար պետք է ծանոթացնել ԿՄԾ 22, 24, 25, 27, 30, 33-35 հոդվածների «Կարմիր բանակայինի ռազմքիմիական պատրաստության կազմակերպումն ու մեթոդիկայի» համապատասխան հրահանգների հետ:

## ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակն է՝ 1. *Ստուգել, թե ինչ չափով են կարողանում.*

*ա) ընտրել ու սարքավորել դիտակետը.*

*բ) վարել դիտողության մատյանը.*

*գ) ընտրել գնդացրի համար տեղ.*

*դ) սարքավորել հրապարակ՝ գենթիային գնդացրի համար.*

*ե) կրակ վարել ողային նշանների վրա.*

*զ) արագ անցնել պահունի դիրքերը.*

*է) ողային նշանների վրա հրաձգությունից արագ անցնել վերերկրյա նշանների հրաձգության և այլն.*

*ը) մարտական աշխատանք վարել ավիաքիմհարձակման ժամանակ.*

*թ) դաղտահանել գնդացիրն ու պահպանել այն կայուն թն վարակումից.*

2) *Ստուգել, թե ի՛նչ չափով դիտեն* ԿՄԾ 22, 33, 34 *հոդվածները:*

Գնահատականը.— «Գերազանց»—*Վստահորեն կատարել քննական վարժության բոլոր պահանջները, ստանալով հրամատարից վոչ ավելի, քան մի ուղղում.*

«Լավ»—*վոչ ավելի, քան յերկու ուղղում.*

«Բավարար»—*վոչ ավելի, քան յերեք ուղղում:*

Կատարման կարգը.—*Ստուգումն անց է կացվում դաշտում թռուցիկ խնդիրների լուծման ձևով՝ քննական վարժության յուրաքանչյուր հարցից:*

Խնդրի չկատարման հիմնական պատճառները կարող են լինել.

*ա) ավելորդ չտապողականությունը կամ դանդաղկոտությունը կատարման մեջ:*

*բ) անբավարար մարզվածությունը կատարման արագության մեջ.*

## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր. 2–ա(ա), 2–բ(բ), 2–գ(վ), 2–դ(դ), 2–ե(դ), 3–գ(վ), 3–ե(դ), 3–գ(ե) (*տես* ՀՏՊՄ—33, *մասն* 1–*ին*):

Մասնագիտական.

2–ամ(աս). Մարզանիշ դիտակետի ընտրության ու սարքավորման մեջ:

*Կրկնվում է 1–ամ, ավելացնելով դիտողության մատյան մարելու պահանջները:*

2–բմ(բս). Մշակել ունակություններ գրնդացրի համար տեղ ընտրելու և գենիթային գնդացրի համար հրապարակ փորելու համար:

*Վարժությունն անց է կացվում ավազով արկղի վրա, այնուհետև՝ տեղանքում, գործնականորեն կատարելով դիրքի սարքավորման բոլոր աշխատանքները՝ թե՛ ողային նշանների վրա հրաձգության համար և թե՛ վերերկրյա թշնամու դեմ կռվելու դեպքի համար: Վարժությունը կրկնվում է հակազդերով:*

2–գմ(վս). Մշակել ունակություններ՝ պա-

հունի դիրքերն արագ անցնելու և գնդացիրը հաստելու համար:

*Վարժությունն սկզբում անց է կացվում ճշտության վերաբերյալ, առանց պահանջելու արագություն, այնուհետև անցնում են պահունի դիրքերի արագ և թագնված տեղաշարժմանը: Պարապմունքները սկզբում կարելի է անցկացնել զորամասի դասավորության մեջ, և ապա անպայման դաշտում, բազմապիսի տեղանքում: Կրկնվում է հակագազերով ու մաշկի պաշտպանության միջոցների գործադրությամբ:*

2-դմ (գս). Մարզանք ռդային նշանների գնդակոծման մեջ:

*Վարժությունը յուրացվում է բոլոր հրաձ գային ու տակտիկական պարապմունքներում կատարած մարզանքի միջոցով: Կրկնվում է հակագազերով:*

2-եմ (դս). Մշակել ունակություններ զենիթային հաստումից արագ անցնելու վերերկրյա նշանների վրա հրաձգության համար հաստումին և հակառակը:

*Մարզանքն անց է կացվում ամեն որ զենիթային հրաձգության պարապմունքները սկսվելուց առաջ և ավարտելուց հետո:*

*Կրկնվում է հակագազերով:*

2-զմ (ես). Մշակել ունակություններ՝ գնդացիրը կայուն թն վարակվելուց պաշտպանելու և գնդացիրը գազահանելու համար:



*Վարժությունն անց է կացվում գործնականապես դաշտում: Գնդացիրը վարակվում է վարժական թն կամ սև նավթով: Գազահանումը ստուգվում է ռեալ ձևով:*

ԽՆԴՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

## ՈՐՈՇԵԿՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՈՒՄԸ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏՈՒՄ

*Խնդրի մշակման ժամանակ կրկնվում են պաշտպանության արդեն իսկ մշակված տարրերը, հաշվի առնելով այդ պաշտպանության տեղափոխումը մի այլ շրջան՝ հարձակողական մարտի ընթացքի համաձայն: Հարձակողական մարտում գալով մի նոր օբյեկտ տեղաշարժվելիս կպահանջվեն ունակություններ՝ պաշտպանելու համար իրեն ու նյութական մասը հրետանական արկերից, գնդակներից, գազերից և այլն. այդ պատճառով, խնդրի յուրացման շրջանում անհրաժեշտ է անցնել 4-րդ խնդիրը՝ «Մերձեցումը հարձակման ժամանակ մարտիկի համար» (տես ՀՏՊՄ-33, մասն 1-ին):*

## Բ. ՋՈԿԻ ՈՒ ՆՐԱ ՇՐԱՍԱՏԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հիմնական նպատակն է՝ պատրաստել ջոկի հրամատարին հակողային պաշտպանության կազմակերպչի ու ղեկավարի դերի համար և այդ հիման վրա ունենալ ջոկի ամբա-

կուռ կոլեկտիվ, որն ընդունակ է խնդիրները կատարելու թե՛ ամբողջ ջոկով և թե՛ անհատապես:

2. Առաջադրված խնդրի կատարումն ապահովվում է այն խնդիրների պլանաչափ, ուշադիր ու համառ մշակումով, որը դրվում են նրանց առաջ ժամանակակից մարտում: Այդ խնդիրները հետևյալն են.

Խնդիր առաջին.— Ցերթն ու նրա պահպանությունը.

Խնդիր յերկրորդ.—Ջոկի հրամատարի դործողություններն օբյեկտի պաշտպանությունը կազմակերպելու ու վարելու ժամանակ, դնդի պաշտպանողական տեղամասի ընդհանուր սիստեմում.

Խնդիր յերրորդ.—Օբյեկտների պաշտպանության կազմակերպումն ու վարելը հարձակողական մարտում:

3. Պարապմունքները կազմակերպում և անմիջականորեն անց է կացնում դասակի հրամատարը: Բոլոր խնդիրների նախապատրաստական վարժությունները անց են կացվում հրամատարական պարապմունքներում, և նրանց մի մասն այնուհետև մշակվում է ամբողջ ջոկով:

4. Բոլոր պարապմունքներում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հրամատարական լեզվի վրա և հասնել նրա անթերի ստուգության:





## ՑԵՐԹՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախ քան մշակումը և մշակման հետ զուգընթացաբար պետք է կրկնել ԿՄԾ 1–21 հոդվածները. Հետևակի մարտական կանոնագրքի 1-ին մասի և «Հակաքիմիական պաշտպանության հրահանգին անհրաժեշտ հոդվածները:

## ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակն է՝ 1. Ստուգել ջոկի հրամատարին, թե ինչ չափով է կարողանում.

ա) ստույգ հաղորդել հրամանները յերթում շարումների ու վերաշարումների համար.

բ) արագ ու ճիշտ ընտրել դիտակետը.

դ) անմիջապես հաղորդել ոդային տագնապի ազդանշանը.

դ) արագ դիրք ընտրել դնդացրի համար.

ե) արագ հաստել դնդացիրը և քողարկել դիրքը.

զ) կազմակերպել հակաքիմիական պաշտպանություն ավիաքիմհարձակումից.

2. Ստուգել, թե ինչ չափով գիտեն ԿՄԾ 8 13, 14, 21 հոդվածները:

Գնահատականը.— «Գերազանց»—, յերբ հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի, քան յերկու տուգանային աշկ.

«Լավ»— *երբ ջոկի հրամատարը կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, ստանալով վոչ ավելի, քան մեկ ուղղում, իսկ կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան յերեք տուգանային աչկո.*

«Բավարար»— *երբ հրամատարն ստանում է վոչ ավելի, քան յերկու ուղղում, իսկ կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 5 տուգանային աչկո:*

Անցկացման կարգը: *Ստուգումը կատարվում է դաշտում ղեկավարի միջանկյալ տրվյալներով կատարած շարժումների ու գործողության միջոցով:*

Չկատարման հիմնական պատճառները կարող են լինել.

*ա) հրամաններ տալու ստույգության բացակայությունը.*

*բ) դանդաղկոտությունը հրամատարի ու մարտիկների աշխատանքում:*

## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր.— 1–ա(ա), 1–գ(վ), 1–դ(գ), 1–ե(գ), 1–զ(ե), 2–ը(ժ) (տես ՀՏՊՄ—33, մասն 1–ին):

Մասնագիտական.

1–ամ(աս). Մշակել ունակություններ՝ զորքերի շարժման ժամանակ դիտակետերի համար և կանգառումներում դիտողների դասավորության համար արագ տեղեր ընտրելու մեջ:



*Վարժությունը մշակվում է նույնպես, ինչպես մարտիկների համար 1–ամ(աս) վարժությունը, միայն այն առանձնահատկությամբ, որ ջոկի հրամատարը մարզվում է ու վարժվում կետեր ընտրել առանց կանգնեցնելու շարժումը (շարժման ժամանակ), որպեսզի զորքերի կանգառման ժամանակ առանց մի բոպե կորցնելու կարգի դիտողներին:*

1–բմ(բս). Մշակել ունակություններ՝ գնդացրի այնպիսի դիրքեր ընտրելու և հետագայում սարքավորելու ու բողարկելու համար, վորտեղից հնարավոր լինի հարվածել ռդային թշնամուն, առանց միաժամանակ հարվածելու իր զորքերին,

*Պարապմունքներն անց է կացնում դասակի հրամատարը, ղեկավարվելով մարտիկի համար 1–գ(վ) նախապատրաստական վարժության ցուցումներով:*

*Պարապմունքները տեղանքում (հրամատարների հետ մարզանքից հետո) անց են կացվում մարտիկների հետ, վորտեղ հրամատարի ուսուցման հետ միաժամանակ մարզվում է նաև ամբողջ ջոկը:*

2679 1006 28222

## ԶՈԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՅԵԿՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՎԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ՝ ԳԸՆԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԻՍՏԵՄՈՒՄ

*Խնդիրը մշակվում է նույն ձևով, ինչպես և մարտիկների համար 2-րդ խնդիրը: Փոխելով քննական վարժության գնահատականները:*

Գնահատականը.— «Գերազանց»— *յերբ հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ կարմիր բանակայիններն ստանում են վոչ ավելի, քան յերկու տուգանային աշկո:*

«Լավ»— *յերբ ջոկի հրամատարը կատարում է վարժության բոլոր պահանջները, ստանալով հրամատար-ղեկավարից վոչ ավելի, քան մի ուղղում, իսկ կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 3 տուգանային աշկո:*

«Բավարար»— *յերբ հրամատարն ստանում է վոչ ավելի, քան յերկու ուղղում, իսկ կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան հինգ տուգանային աշկո:*



ԽՆԴԻՐ ԳԵՐԲՈՐԳ

## ՈՐՅԵԿՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՆ ՈՒ ՎԱՐԵԼԸ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏՈՒՄ

*Խնդրի մշակման ժամանակ կրկնվում են պաշտպանության արդեն մշակված տարրերն առաջին յերկու խնդիրներից, հաշվի առնելով այդ պաշտպանության տեղափոխումը մի այլ ռայոն՝ համաձայն հարձակողական մարտի ընթացքի:*

*Հարձակողական մարտում դեպքի նոր կերը տեղաշարժվելիս, կպահանջվեն ունակություններ՝ պաշտպանելու համար ջոկն ու նյութական մասը հրետանական արկերից, գնդակներից ու դաղերից և այլն: Այդ պատճառով, 3-րդ խնդրի յուրացման շրջանում անհրաժեշտ է զուգընթացաբար անցնել 4-րդ խնդիրը՝ «Մերձեցումը հարձակման ժամանակ ջոկի համար»* (տես ՀՏՊՄ-33, մասն 1-ին)

---

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## Ա. ՀԱԿՈԴԱՑԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԻ ՄԱՐՏԻԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր ցուցումներ . 3

Ենդիրներ.—1. Ցերթն ու նրա պահպանությունը։ 2. Մարտիկի գործողությունները գնդի ընդհանուր պաշտպանողական տեղամասի սիստեմում օբյեկտի պաշտպանությունը կազմակերպելու և վարելու ժամանակ։ 3. Օբյեկտի պաշտպանության կազմակերպումն ու վարումը հարձակողական մարտում։

## Բ. ՋՈԿԻ ՈՒ ՆՐԱ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր ցուցումներ . 13

Ենդիրներ.—1. Ցերթն ու նրա պահպանությունը։ 2. Ջոկի հրամատարի գործողությունները օբյեկտի պաշտպանությունը կազմակերպելու ու վարելու ժամանակ գնդի պաշտպանողական տեղամասի ընդհանուր սիստեմում։ 3. Օբյեկտի պաշտպանության կազմակերպելն ու վարելը հարձակողական մարտում։

Մ. Ա. Ալեքսանդրի
Ա. Մանկանցի անվան



ՀՀ Ազգային գրադարան
NL0218718

ԳԻՆԸ 20 Կ.

42.390

Методика
Тактической
Подготовки
Пехоты